

այնքան շատ օտար շրջանակներէն, եւ նախանձով կը դիտէին թէ անոնք կը վայելին ազատութիւններ, որոնց բաղձալը արգելուած էր իրենց: Հանրապետական կառավարութիւնը քայլ առ քայլ նկատեց եւ հետեւեցաւ իր քաղաքականութեան արդիւնքին: Անիկա չէր անգիտանար, որ թուրքը միշտ կրած է Եւրոպայի եւ մանաւանդ Ֆրանսայի բարոյական, մտաւորական եւ բնկերային ազդեցութիւնը, եւ ինք իր աչքին ինքզինքը բարձրացած կը նկատէր, որովհետեւ կրցած էր, բռնակալ վարչաձեւին թոյլ տուած շափով, իւրացնել Արեւմուտքի դադափարներն ու սովորոյթները, միեւնոյն ժամանակ բարոյական բռնուհուկութիւն ունէր ինքզինքը աւելի բարձր զգալու ժողովրդային զանգուածէն, որ անուս էր եւ նախնական, քանի որ լուծի տակ կը դանուէր:

«Կարգ մը թուրքերու արեւմտեան կեանքի հանդէպ ունեցած նախասիրութեան մասին համոզուելու համար, կը բաւէ ճանչնալ անոնց ներքինը, շիտիլ անոնց հետ, տեսնել անոնց ապրելակերպը, արգիական հանգստաւէտութեամբ եւ դիւրակեցութեամբ, գնահատել ճաշակն ու վայելչութիւնը թուրք կնոջ, որ իր օճախին կազմակերպութեան եւ բնաանեկան ու աշխարհիկ կեանքի հազար մանրամասնութեանց մէջ ճիշդ եւրոպայի կնոջ պէս կը գործէ: Այս բարեկեցութիւնը, վայելչասիրութիւնը, դիւրակեաց կեանքը, պերճանքն ու հաճոյքը, միայն հարուստ դասակարգին մենաշնորհը չեն: Անոնք որ երկար տեսնէ ի վեր թուրքիա կ'ապրին, քանի մը տարիէ ասդին կը տեսնեն յեղաշրջում մը, դեռ անորոշ, բայց որ նախաքայլն է նոր մտայնութեան մը, մօտիկ ապագայի մէջ:

«Այսօրուան երիտասարդները, մանաւանդ միջնակ դասակարգին պատկանողները, ըստի նախանձով կ'ընթանան դէպի արգիականութիւն մը, որ սակայն կը յապաղի առհաւակաւ պարզասիրութեան եւ խտամբերութեան պատճառով: Ինչպէ՞ս կարելի է քանի մը տարուան մէջ աւելի կատարեալ վերականգնում պահանջել անոնցմէ: Սակայն երիտասարդները կը կատարելագործուին ամէն օր, փափաքելով քայլ մեծ պետին եւ զայն շրջապատող համաստեղութեան հետքերուն վրայ,

իրենց խտունուածքին, ձգտումներուն եւ միջոցներուն չափով, իրարու հետ կը մրցին՝ աւելի արագ իւրացնելու համար եւրոպական սովորոյթները: Մուսթաֆա Բեմալ փաշա իշխանութեան գլուխ անցնելէն ի վեր երեւան եկաւ իբրեւ արժէքաւոր քաղաքական եւ բնկերային բարենորոգիչ մը»:

Տ. Վայլերի, «Թան»ի բանիմաց թղթակիցը, ցոյց տալ ուզելով՝ թէ «նոր թուրքիոյ դեկավարները հասկցած են, որ ծրագրուած նրպատակին կարելի է հասնիլ ոչ թէ հազուա փոխելով կամ աշխարհիկ յախուռն փոփոխութիւններ մտցնելով, այլ լուրջ բարեկարգութիւններով, որոնք հետեզհետէ պիտի բարելոնեն եւ զարգացնեն տակաւին յետամնաց մտայնութիւն մը», կ'անդրադառնայ ներկայիս ուսումնասիրութեան մէջ եզոզ կրօնական բարեկարգութեան հարցին՝ որ պիտի ծառայէ ոչ միայն «թուրք ժողովուրդի բնկերային դաստիարակութեան եւ խղճմտանքներու զարթօնքին», այլ նաեւ «խլամական կրօնքը իսլամ ժողովուրդներու առաջնորդի եւ վերանորոգիչի դերը պիտի կատարէ»: Եւ այս կերպով կը շարունակէ:

«Հո՛ւս է գլխաւոր հետաքրքրութիւնը ծրագրուած բարենորոգումին, որ կոչուած է լրացնելու քաղաքական եւ բնկերային միւս բարենորոգումները: Աֆղանխտանի հետ կընքած իր դաշնագրով, Թուրքիա, որ դեռ քանի մը տարի առաջ ուրիշ ազդերու աշակերտն էր, քաղաքական եւ մտաւորական դաստիարակի դերին բարձրացու, որ պիտի կատարեն Աֆղանխտան զրկուելիք թուրք մարմիններ: Ու եթէ նոր բարեկարգութիւնը գործադրուի, անիկա պիտի ձեւակերպէ իսլամական խիղճերը եւ անոր վարիչը պիտի դառնայ: Այսպէս, եւրոպականանալով հանդերձ, Թուրքիա կը պատրաստուի, իր ձեռք բերած հմայքին շնորհիւ, դառնալ արեւելեան մեծ պետութիւն մը»:

Առանց խորը մխրճուելու Փրանսայի հրապարակախօսի տեսակէտներուն, որ հպումի եւ ներդաշնակուելու կը կարօտին՝ կարենալ տալու համար թուրք ազգայնութեան եւ հայրենիքի դադափարներու աննման շարժումին հարագատ պատկերը եւ սահմանափակելու իս-